

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանում է, որը ՀՀ օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթներ է իրականացնում Ակադեմիայի որակի ներքին ապահովման համակարգի կառավարման, որակի մշակույթի արմատավորման ու կայուն զարգացման ուղղությամբ:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:

4. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Ակադեմիայի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

5. Բաժինն Ակադեմիայի ռեկտորի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակում, համագործակցում է Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման մարմինների, նրանց ստորաբաժանումների, պետական և մասնավոր տարբեր կառույցների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

6. Բաժնի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, Ակադեմիայի ռեկտորի հրամաններով, կարգադրություններով և այլ իրավական ակտերով:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) նպաստել Ակադեմիայի արդյունավետ կառավարմանը, գործունեության հիմնական ոլորտներում վստահության ամրապնդմանը և Ակադեմիայի շնորհած որակավորումների որակի ու գործող չափորոշիչների պահպանմանը և շարունակաբար բարելավմանը,

2) ապահովել, արդիականացնել և զարգացնել կրթության որակի ապահովման համակարգը,

3) ձևավորել Ակադեմիայի առաքելության իրագործման համար անհրաժեշտ պայմաններ կրթության որակի ապահովման ուղղությամբ,

4) մշակել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներքին (Ակադեմիային բնորոշ) համակարգ՝ բարձրագույն կրթության որակի ներքին արժևորման արդի պահանջներին համապատասխան,

5) նախաձեռնել առկա կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման և նոր ծրագրերի ներմուծման փուլային գործընթաց՝ աշխատուժի շուկայի արդի պահանջներին համահունչ,

6) աջակցել Ակադեմիայում ներդրված կրեդիտային համակարգի կատարելագործմանը,

7) նախապատրաստել Ակադեմիան կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին՝ բարձրագույն կրթության որակի արտաքին արժևորման պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխան:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է որակի ապահովման ընթացակարգեր կրթական ծրագրերի հաստատման, մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացների համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը հաստատության ուսումնական ստորաբաժանումներում (ամբիոններում),

2) համակարգում է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացները,

3) մշակում է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմը և համակարգված մոտեցումները,

4) մշակում է ընթացակարգեր կրթական ծրագրերի և առանձին դասընթացների (մոդուլների) մակարդակում դասավանդման և ուսումնառության որակի գնահատման համար,

5) գնահատում է դասախոսական կազմի (դասախոսների) աշխատանքը և ուսումնական գործունեությունը, ինչպես նաև նրանց դասավանդման մեթոդները,

6) իրականացնում է որակի ապահովման միջազգային փորձի ուսումնասիրություն, համապատասխան մեխանիզմների տեղայնացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

7) իրականացնում է որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում Ակադեմիայի ստորաբաժանումներին,

8) գնահատում է կրթության կազմակերպման գործընթացը, այդ թվում՝ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, կադրային ապահովվածության արդյունավետությունը, ներկայացնում է համապատասխան առաջարկություններ,

9) գնահատում է կրթական գործունեության արտաքին վերահսկողության չափանիշների ապահովումը,

10) համագործակցում է որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցների հետ:

IV. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Բաժնի կառավարումն իրականացնում է Ակադեմիայի ռեկտորը:

10. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը, ով պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից:

11. Բաժնի պետը հաշվետու է Ակադեմիայի ռեկտորին, գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

12. Իր գործունեության ընթացքում Բաժնի պետն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով, Ակադեմիայի կանոնադրությունով, սույն կանոնադրությամբ, Բաժնի պետի պաշտոնի անձնագրով:

13. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի՝ սույն կանոնադրությամբ սահմանված գործառույթների պատշաճ իրականացման համար:

Վ. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

14. Բաժնի աշխատողների թիվն ու մասնագիտական կազմը սահմանում է Ակադեմիայի ռեկտորը:

15. Բաժնի աշխատողների գործառույթները, մասնագիտական որակավորումները, լիազորությունները, ինչպես նաև իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատողների աշխատանքային պայմանագրերով, պաշտոնների անձնագրերով և այլ իրավական ակտերով:

16. Անհրաժեշտությունից ելնելով՝ Բաժնի պետի առաջարկությամբ ռեկտորի կողմից Բաժնի կանոնադրական խնդիրների լուծման համար ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: